

ՄԱՍԻՆ

ԿԻՍԱՄԱՆՈՒՄ  ԳԱՆՂԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐԸ, ԳԵՂԵՅԻԿԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ
ՍԻՊԻԼ

ՊԻԻՆԵՐԻ ԱՌԹԻՒ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՄԱՍՈՒԼԸ ԻՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՂ ՕՌԿԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ՄԱՍՈՒԼԻՆ ԴԵՐԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՄԷՋ

ԳՐԱԳԱՏԱԿԱՆ

ԳԻՉՈՒՔԻԼԸ ԵՒ ՄԱՆՇԵՐՈՒ ՔՇՆԱԺԻՆ

ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ

ԱՐԱՄ ԱՆՅՈՆԵԱՆ

Dr. Մ. ՎԱՇԷ

ՀԷՆՐԻՔ ԻՊՍԷՆ

48^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 18

25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899

ՏՆՕՐԷՆ—ԽՄԻԱԳՐԱՊԵՏ ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

**«ՄԱՍԻՍ»-ի ներկայ թիւը բացառաբար կը բաղկանայ
16 էջէ և ձեռքէ կը ծախուի հասար 40 փլյի»**

«ՄԱՍԻՍ»-ի 19-20 միացեալ թիւերը հրապարակ պիտի ելլէ յառաջիկայ Հոկտեմբեր 16 ին . 21րդ թիւէն սկսելով Մասիս կանոնաւորապէս պիտի հրատարակուի ամէն ամսու 1 ին և 16 ին . Բաժանորդագրութեան համար դիմել թերթի տնօրէնին :

«ՄԱՍԻՍ»-ի տնօրինութիւնը հարկադրուած է վերջին անգամ ըլլալով յայտարարելու բոլոր գործակալներուն և բաժանորդներուն , որ 19րդ թիւէն սկսեալ միայն իրենց բաժանորդագիրն Վճարողներու թերթ պիտի ղրկուի : Ուրեմն բոլոր պարտք ունեցողները պէտք է փութան իրենց հաշիւը կարգադրել ընդ փոյթ :

Խմբագրութեանս մէջ ստացուած են .

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ . գրեց Տեք. Յովսէփ Տէր-Սեփանեան , 38 էջ . Գին 5 ղրշ . Տպագրութիւն Յ. Մասթոսեան , 1899 :

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄ . ԸՆԴՀ . ԱԶԳԱՅ . Մասն Ա. Արեւելեան հին Ազգեր . գրեց Մ. Գ. Ծալեան . 117 էջ . Գին 5 ղրշ . Տպագր. Յ. Մասթոսեան , 1899 :

ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐՔԵՐ . գրեց Ա. Խաճակեան , 64 էջ . Գին 10 կոպէկ . Աղեքսանդրոպոլ , 1898 :

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ , ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ , որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին երկերիւն օրինակ ուղարկել Խմբագրութեանս , թերթի տնօրէնին հասցէով : Խմբագրութեանս ուղարկուած գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին :

Մասիսի վերաբերեալ ամէն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել թերթի տնօրէն-խմբագրին

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՍՏԱՆԷԱՆ

Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Սթամպուլ , Պապլը Հաուզ , Յ. Մասթոսեան տպարան

Թերթի տնօրէնը անձամբ կարելի է տեսնել ամէն օր ժամը 6—9 , Մատթէոսեան տպարանը :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌՆԵՐԸ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան 44 ղրշ .	54	12 ֆր .
Վեցամսեայ 22 »	27	6 »

ՄԱՍԻՆ

48^{րդ} ՏԱՐԻ

— 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899 —

ԹԻՒ 18

ՆՈՐԸ, ԳԵՂԵՑԻԿԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՆՐԸ

Ս Ի Պ Ի Լ

— օգոստոս —



ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ գործ մըն է, զոր ամէն մարդ իր կերպովը կ'ըմբռնէ. ընթերցողներէն ոմանք կը փափաքին միշտ նոր նիւթեր գտնել թերթի մը մէջ, ոմանք գեղեցիկ յօդուածներու չարք մը կը հետազօտեն, և ոմանք ալ օգտակարը միայն կը փնտրուեն: Ընդհանուր առմամբ, կարելի է ըսել թէ նորն ալ գեղեցիկին չափ գեղեցիկ է, և գեղեցիկն ալ օգտակարին չափ օգտակար, ու մէկուն սեպհական արժէքը չի պակսիր միւս յատկութիւններէն զուրկ ըլլալուն պատճառաւ: Օգտակարը որքան հիննայ, միշտ կը պահէ իր ինքնութիւնը, և թաքուն հաճոյք մը կայ զայն իր բուն արժէքին համար միայն սիրելուն մէջ, ինչպէս գրողին՝ նոյնպէս ընթերցողին համար: Այս կարգէն է աղջկանց բարձրագոյն վարժարանի մը խնդիրը: Գաղափարը հին է. այնքան դրուեցաւ, այնքան խօսուեցաւ որ իր հրապոյրը կորսնցուց, բայց ոչ օգտա-

կարութիւնը, և եթէ այսօր կը վերագառնանք անոր, պատճառն այն է որ կը հաւատանք անոր իրականացման, ինչպէս հաւատալով, գրելով ու խօսելով իրականացաւ վերջապէս Էսայեան վարժարանի լրացուցիչ դասընթացքի գաղափարը, որ աղուոր երազի մը տպաւորութիւնը կ'ընէր դեռ անցեալ տարի այս ժամանակ:

Գժրադդաբար, փորձով կը տեսնենք որ մեր հարուստ դասակարգը բնաւ հակամէտ չերեւար անկէ օգտուելու: Մինչեւ ցարդ արձանագրուողներէն ամէնքն ալ աղքատ կամ միջին դասու աղջիկներ են: Անոնք՝ որ կրնան ամբար մէկ քանի ոսկի վճարելու պերճանքը վայելել, միշտ կը յամառին օտարներու վճարել զայն. և անիրաւ չեն բոլորովին, ըստ որում աղգային ոչ մէկ վարժարան իր յարատեւութեամբը կրցած է մեր հասարակութեան վստահութիւնը դրաւել: «Տեսնենք քանի ամիս պիտի տեսէ.» կ'ըսէ ամէն մարդ, և հոգաբարձութիւնը շատ հաստատամտութիւն և շատ մըն ալ անձնուիրութիւն պէտք է ունենայ, որպէս զի մեր պղատոնական համակրու-

թիւններով միայն սրտապնդուած՝ դըպ-
րոցական շրջան մը կարենայ բոլորել տալ
իր աշակերտներուն ։

Երբ դործ մը այս պարագաներուն
մէջ իսկ կը յաջողի վերջապէս բարի կա-
մեցողութեան ոյժովը , ի՞նչու բարձրա-
գոյն վարժարանի գաղափարը անգոր-
ծադրելի մնայ ։ Շատոնց ի վեր կը լսենք
թէ քանի մը զարգացած տիկիներ ա-
ռաջին քայլը առած են արդէն բաւա-
կան կարեւոր գումար մը հանգանակե-
լով մէջերին ։ Ի՞նչ բան արդեւ կ'ըլլայ
իրենց դործը առաջ վարելու , կամ ի՞նչ
նկատումներ կը կասեցնեն զիրենք այդ-
գեղեցիկ ձեռնարկութեան մէջ ։

Ինչ որ ալ ըլլայ այդ ծածուկ պատ-
ճառը , արդիւնքը նոյնքան ցաւալի է
մեզի համար , քանի որ աղջկանց վար-
ժարանի մը պակասը ամէն ժամանակէ
աւելի այսօր զգալի է , քանի որ երկար
տարիներու փորձառութեամբ ալ հա-
մոզուած ենք կատարելապէս թէ տոհ-
մային մասնաւոր կրթութիւն մը պէտք
է մեր իգական սեռին , որ ոչ փրանսա-
կան ըլլայ , ոչ անգլիական ոչ գերմա-
նական , այլ ասոնց ամէնուն լուսադոյն
յատկութիւններովը բաղադրուած՝ հիմ
ունենալով իրեն ցեղական ոգին և նկա-
տողութեան առնելով ժամանակին պա-
հանջները ։ Ապահովապէս եւրոպացի
վարժուհիները չեն որ այս դաստիարա-
կութիւնը պիտի տան մեր աղջիկներուն ,
որովհետեւ այս դաստիարակութիւնը
պէտք է բուն իսկ մեր կեանքէն բղիթի ,
և մեր վարքին , բարքին , միջավայրին
պէտքերուն և հակումներուն համապա-
տասխանէ , ինչ որ միայն և միայն մեր
իմացողութեամբը , մեր դատողու-
թեամբը , մեր փորձառութեամբը կըր-
նանք ձեւակերպել , ու մեր լեզուովը ,
մեր օրինակովը աւանդել ։

Այս դործին հեղինակութիւնը , ինչ-
պէս գործադրութիւնը ոչ մեր դրամա-
տէրներէն , ոչ մեր կղերէն , ոչ ալ մեր
տիկիներէն պէտք է ակնկալել . անոնց
պաշտօնը ուրիշ տեղ է . բարեգործա-
կան հանգանակութեանց գլուխը , եկե-
ղեցական բեմին վրայ , և իրենց ընտա-
նեկան յարկին տակ ։ Այս դործը ուղ-
ղակի մեր ուսուցիչներուն կը պատկանի ։

Ինչ որ ալ մտածէ ժողովուրդը , ինչ
որ ալ ըսեն կարծ խելք մարդիկ , մենք
կատարեալ գիտակցութիւն ունինք թէ
այսօր մեր ամէնէն աւելի զարգացած ,
ուսեալ , ընթերցող , խորհող , խօսող ,
գրող մասը մեր ուսուցիչներու դասա-
կարգն է ։ Եթէ անոնք այս ձիրքերով
չեն կրցած իրենց արժանիքը գնահատել
տալ , պատճառն այն է որ դրամ չու-
նին , հետեւաբար դիրք չունին ։ Այդ
դիրքը , այդ դրամը պիտի ունենան եթէ
Ուսուցչական Յանձնաժողովը շարունակէ
ամէն տարի արժանաւորագոյնին միայն
չնորհել արտօնագիրը պաշտօնի մը , զոր
վարողին ձեռքը պիտի յանձնենք մեր
սերունդներուն ճակատագիրը ,

Բայց անձնական գոհացումներուն
գլխաւորը՝ դրամը կամ դիրքը չէ մաքի
մարդոց համար . ուրիշ տեսակ մը գո-
հացում ալ կայ , վեր , շատ վեր միւս-
ներէն . պարտականութեան մը կատա-
րումը , ինչ որ անբռնաբարելի է ։ Եւ
չէ՞ք կարծեր թէ ճշմարիտ պարտակա-
նութիւն մը ըլլայ մեր ուսուցիչներուն
համար մասնաւորապէս իգական սեռին
դաստիարակութեան գործովը զբաղիլը ,
վարժարաններու մէջ դասաւանդութենէ
տարբեր եղանակով ։ Չէ՞ք կարծեր թէ
իրենք իրենց մէջ համաձայնելով կարե-
նան աղջկանց բարձրագոյն վարժարան
մը հիմնել , որ կախում չունենայ ազ-

գային վարչութեանէն, և կառավարութեան միայն պատասխանատու ըլլայ, մայրաքաղաքիս բոլոր անհատական դրսւրոցներուն նման :

Այսպիսի հաստատութեան մը ուսման յայտադիրը պատրաստելու և զայն տիրապար ուսումնարանի մը վերածելու կարողութիւնը չէ որ կը պակսի մեր ուսուցիչներուն, որովհետեւ մօտէն գիտեմք թէ ամէնէն աւելի անոնք ունին այդ ձեռնհասութիւնը : Միայն դրամագլխի խնդիր մը կայ մէջտեղը որ ահագին համեմատութիւններով կը ներկայանայ ամէնուն աչքին, և որ շատ կը թեթեւնայ, եթէ ուսուցիչներու կողմէն վիճակով ընարուած կարող մասնագէտներու խումբ մը յանձն առնէ իր մէջ բաժնել դասերը, և իւրաքանչիւրը շաբաթը երկու ժամ անձնուիրաբար դասախօսէ իր ճիւղը, մինչեւ որ վարժարանին պիտոճէն իր հաւասարակշռութիւնը գտնէ աշակերտներու թիւակներովը :

Իսկ սկզբնական ծախքերուն և մնացուն պաշտօնեաներուն ամսականին համար կրնան դարձեալ ուսուցիչները փոքրիկ զոհողութիւն մը բնել, իրենց նիւթական կարողութեան համեմատութեամբ, ամսական չնչին գումար մը վճարելով կեդրոնական սնտուկի մը, որմէ հայթայթուին անհրաժեշտ ծախքերը :

Պիսոյ մէջ առ նուազն 200 ուսուցիչ ունինք, որոնք եթէ միջին հաշուով ամիսը 10ական զրոյ վճարեն, 2000 զրոյի ամսաթուակ մը կը գոյանայ և տարին 24000 զրոյի կը հասնի :

Այսպէս, առանց ուրիշին դիմելու, իրենք իրենց մէջ կը յաջողին վարել դրսւ-

րոցը գէթ քանի մը տարի, մինչեւ որ ժողովուրդը ճանչնայ, գնահատէ ու ինքնաբերաբար դիմէ անոր՝ իր զաւակները ընդունել տալու խնդրանքով : Եւ աներկբայ նախանձելի վիճակ մը կրնայ ստանալ այդ հաստատութիւնը, եթէ ամէն ուսուցիչ իրը նկատէ զայն, և անոր յառաջադիմութեանն ու արդիւնքին պատասխանատու ճանչնայ ինքզինքը իր խղճին հանդէպ :

Միթէ այս տեսակ ձեռնարկութեանց չնորհիւ չէ՞ որ բարձրացած է ուսուցիչներուն դիրքը նիւթապէս և բարոյապէս՝ զարգացած ժողովուրդներու մէջ, և միթէ գերազանցօրէն բարձր առաւելութիւն մը չէ ուսուցչի մը համար ունենալ վարժարան մը, որ զինքը կարենայ հիւրընկալել, երբ տեսուչներու կամ հոգաբարձուներու անիրաւ մէկ քմահաճոյքին զոհ երթալով՝ միջոց մը անգործ մնայ : Այս պայմաններով չէ՞ որ կրնանք պահել արժանապատուութիւնը ուսուցչի անունին, զոր ձեռք ձգելու յաջողութիւնը շատ դժուարութեանց պիտի կարօտի այսուհետեւ :

Իմն շատ թերի, շատ հակիրճ առաջարկութիւն մըն է լոկ, յանկարծական մտածման մը արդիւնք, զոր իր նախնական վիճակին մէջ կը ներկայացնեմ բոլոր պաշտօնակիցներուս : Եթէ հաճին զայն նկատողութեան առնել և ուսումնասիրել, թերեւս կարենան շատ աւելի կատարեալ ձեւ մը տալ անոր, այնպէս որ այս պարզ գաղափարը՝ նոր, գեղեցիկ և օգտակար ձեռնարկութեան մը շարժառիթը ըլլայ գուցէ հաւասարապէս նպաստաւոր հայ իգական սեռին և ուսուցչութեան :

ՊԻԻՀՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ԱՐՏԱՇԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԲՕՅԵՍԷՕՌ Լուսավիթ Պիւհնէր, հռչակաւոր հեղինակ Նիւթ եւ Զօրութիւն, Բնութիւն եւ Գիտութիւն, Լոյս եւ Կեանք, Մարդը՝ Գիտութեան համեմատ, Անասուններու հոգեկան կեանքը, Բանախօսութիւն՝ Տարվիկեան վարկածին վրայ գործերուն, մեռաւ :

«Յայտնի է թէ Նիւթ եւ Զօրութիւն գործը ստիպեց իր հեղինակը թողելու իր Բօսֆէսէօօրի պաշտօնը՝ Թիւպինկէնի համալսարանին, ու պարտաւորեց զինքը բժշկութեամբ զբաղիլ, ապրելու համար, Տարմշդաւի մէջ :

Այսպէս կը գուժէր ֆռանտական գիտական հանդէս մը, իր յուլիսի թիւով, մահը գերմանացի նշանաւոր գիտնականին :

Պիւհնէր անունը մեր ընթերցող հասարակութեան մէկ մասին ալ ծանօթ է, իբրեւ անհաւատ, անբարոյական գերմանացիի մը անունը :

Երբ կը տեսնենք թէ գերման ազգին պէս մեծ ու քաղաքակիրթ ազգ մը վտարած է այդ մարդը իր համալսարաններէն, գրած ըլլալուն համար Նիւթ եւ Զօրութիւնը, չենք զարմանար անշուշտ որ մեր մէջ ալ միայն այդ համբաւով ծանօթ ըլլայ ան :

Հանրութեան հետաքրքրութիւնը մեծ կ'ըլլայ միշտ այս կերպով հալածուած մարդերուն նկատմամբ, որոնց անունը երբեմն կը մեծնայ հակաազգայնութեան մը շնորհիւ :

Հետաքրքիր չէինք սակայն թէ ի՞նչ կրնայ եղած ըլլալ այդ Նիւթ եւ Զօրութիւն գրքին պարունակութիւնը, այդ հալածանքն ու այդ անբարոյականութեան համբաւը արժեւորելու համար իր հեղինակին : Նպատակէս գուրս է այստեղ քննութիւնն ընել այդ գործին՝ զոր մանաւանդ պէտք էր նախ մեր լեզուին թարգ-

մանել : Միայն կ'ուզեմ անոր ընդհանուր պարունակութեան վրայ ակնարկ մը ձգել եւ ծանրանալ մանաւորապէս այն խորհրդածութիւններուն վրայ՝ զոր այդ ակնարկը կրնայ իբրեւ եզրակացութիւն թելադրել մեզի :

Կրկնենք. Պիւհնէր՝ անբարոյական, վտանգաւոր, արհամարհելի, երկիւղալի մարդ հռչակուած է, ո՛չ թէ իր անհատական ու հասարակական կեանքին մէջ մէկին վնասած, կամ իսկապէս անբարոյական գործ մը գործած ըլլալուն, այլ պարզապէս միայն գրած ըլլալուն համար ծանօթ գործը :

Այս նկատողութիւններէն ետքը թերեւս մտածուի թէ այդ վերքը գուցէ իր պարունակութեամբ անբարոյականութիւն քարոզած ըլլայ : Թերեւս հեշտական տեսարաններու զրգոյն նկարագրութիւններ եւ ցանկական պատկերներ պարունակէ : Գուցէ ուղղակի ապականութիւններու եւ մոլութիւններու ջատագովութիւնն ըրած ըլլայ : Ասոնցմէ գուրս ի՞նչ կրնայիք ենթադրել, մարդ մը եւ իր գործը անբարոյական հռչակելու համար : Դատողութեան այս անձուկ հնարքը չգործածուեցա՞ւ, դատապարտելու համար Էմիլ Զուլա վիպասունը :

Բայց Նիւթ եւ Զօրութիւն գործը վէպ կամ գրական որեւիցէ արտագրութիւն չէ. գիտական երկասիրութիւն մըն է, զոր հեղինակը մակադրած է «Ժողովրդային ուսումնասիրութիւններ» բնական պատմութեան եւ իմաստասիրութեան :» Յանկը աչքէ անցնելով նշանակենք կարեւոր գլուխներէն մի քանին. Նիւթիւն աննահութիւնը, Զօրութեան աննահութիւնը, Բնութեան զօրութիւններուն անփոփոխութիւնը, Բնական օրէնքներուն տեսութիւնը, Երկինքը. Ստեղծագործութեան շրջանները, Նախնական տեսութիւնը, Ուղեղ եւ Հոգի, եւ այլն :

Ինչպէս յայտնի կը տեսնուի, ամբողջ գործը գուրս գիտական բնութիւն ունի, Բայց

երբէք Պիւնէրի այս աշխատութիւնը պէտք
չէ նկատենք իրբու բոլորովին նոր տեսու-
թիւններու գիւտեր երեւան բերող գործ :
ինքն է որ կ'ըսէ յառաջարանին մէջ . « Յա-
ւակնութիւն չունինք ընթերցողին ներկայա-
ցընելու այս գործով՝ ամբողջ գրութիւն մը :
Միայն ցրուած գաղափարներ ու ծանօթու-
թիւններ կան հոն, որ սակայն սերտիւ իրարու
հետ կը չգլխադառնան ու զիրար կ'ամբողջացը-
նեն : Մենք զանոնք ծաղկաքաղցիւնք բնա-
կան գիտութիւններու ընդարձակ սահմանին
մէջ . փորձական իմաստասիրութեան տեսա-
կէտէն նկատողութեան առնելով : »

« Չենք յաւակնիր որ մեր գաղափարները
նոր ըլլան կամ բնաւ ուրիշներու կողմէ յայտ-
նուած : »

« Այն միակ արժանիքը, որուն կը ցան-
կանք, վատթէն ուրացած ըլլալ չէ այն հե-
տեւութիւնները, որ կը բղխին բնութեան մէկ
անկողնակալ ուսումնասիրութենէն, հիմնուած
փորձարկութեան ու իմաստասիրութեան վրայ,
այլ՝ ամենուրեք դաւանած ու խոստովանած
ըլլալ է ճշմարտութիւնը : »

Առաջին անգամ չէր ուրեմն որ գիտու-
թեան վրայ խօսող ժողովրդային երկ մը հրա-
պարակ կը նետուէր : Այդ գրքին տուած ծա-
նօթութիւններու մէկ մասը մենք մեր նախ-
նական կրթութեան մէջ իսկ առած ենք :

Ինչպէս ուրեմն այն հալածանքը՝ որուն
Պիւնէր ենթարկուեցաւ :

Գիտութիւնը, ինք իր մէջ առանձին առ-
նուած, չէզոք խուզարկութիւն մըն է բնու-
թեան գաղանիքներուն՝ զորս կը ջանայ երե-
ւան հանել : Չուտ գիտութիւնը անտարբեր
երեւոյթ ունի ք եւ է գաղափարային նկատու-
թեան հանդէպ : Անի միայն կը քննէ, կը
խուզարկէ ու կը հաստատէ, ինչ որ կը պատ-
կանի բնութեան սահմանին : Մարդկային ի-
մացականութիւնը ունի կարգ մը յատկութիւն-
ներ, որոնց համեմատ գիտէ քամել գիտու-
թեան այդ չէզոք համարուած ստուգութիւն-
ները (constatation), որոնցմէ եզրակացու-
թիւններու յանգելու համար տիեզերքին մէջ
մարդուս դիրքին, երկրի վրայ անոր անհա-
տական ու հաւաքական գոյութեան պայման-
ներուն, վերջապէս իր ապագային ու իր վերջ-

նական յատկացումներուն նկատմամբ : Գի-
տութեան այս քամուքը, իսկութիւնը, կը
կազմէ տնա իմաստասիրութեան նիւթ, որուն
վրայ մարդիկ կը հիմնեն իրենց աշխարհա-
յեցողութիւնները :

Գիտութիւններուն մեր տրամադրութեան
տակ դրած ծանօթութիւններէն օգտուելով,
իմաստասիրելու երկու գլխաւոր մէթոտ կայ .
1. Բնազանցական մեթոտ . 2. Դրական մե-
թոտ :

Բնազանցական մեթոտը, որ կը պարու-
նակէ իր մէջ աստուածաբանական տարրը,
սխալ հասկացողութիւնն ու սխալ մեկնու-
թիւնն է գիտութեան : Իմաստասիրելու այս
կերպը, որ կը յարատեւէ դեռ, նոյն իսկ
կարգ մը գիտուններու գլխին մէջ, ունի իր
պատճառները, որոնցմով դրաղելու նպատակ
չունինք այստեղ : Միայն սա՛ պէտք է հաս-
տատենք թէ անիկա գիտութեան ծանօթու-
թեամբը խեղադիւրեւելով, հիմնուած է էապէս
մտքի դրական սահմանները բռնաբարելու
սկզբունքին վրայ : Անիկա յաւակնոտ է ու
չուզեր յարաբերականութեան անձնատուր ըլ-
լալ : Գուցէ մտքի դժբաղդ մոլորում մը, ուր
անել ճամբաներու մէջ իմացականութիւնը կը
կորսնցնէ իր յատկութիւնն ու հաւասարա-
կըշտութիւնը : Ասիկա՝ իմաստասիրելու հին
գրութիւնն է, որ դեռ կը յարատեւէ :

Աշխարհի եւ իրերու մասին տարակոյսէ
զերծ կերպով մը կազմելու համար մեր եղ-
րակացութիւնը, պէտք է որ մեր գատողու-
թիւնները հիմնենք այն ծանօթութիւններուն
վրայ՝ զոր արտաքին իրերու մասին կ'ընդու-
նինք՝ մեր զգայարաններուն միջոցով : Այ-
նուհետեւ՝ մեր միտքը վարժեցնելու ենք ի-
րերը տեսնելու այնպէս՝ ինչպէս որ են իրօք,
ու ոչ թէ բնազանցական տրամադրութիւն-
ներով, այնպէս՝ ինչպէս՝ մեր երեւակայու-
թիւնն ու քմահաճոյքը կը թելադրեն մեզի :
Իմաստասիրելու այս կերպը, որ կը բաւակա-
նանայ իրականութիւններով ու դրական ճշ-
մարտութիւններով միայն, կը կոչուի դրա-
կան մեթոտ :

Մենք նպատակ չունինք ուղղութեանց
տարբերութիւններուն ու նրբութիւններուն
քննութիւնն ընել այստեղ : Զնչեւք՝ միայն

թէ երկու մեթոտները թշնամի են իրարու : Առաջինը , բնազանցականը , թանձր խուժանին ու զինքը ներկայացնողներուն մասածելու կերպն է դեռ : Անոր համեմատ ժողովուրդը կը պահէ իր սխալանքները , կը նուիրագործէ իր նախապաշարումները , ու գիտնք թէ անիկա որքան լաւ խմորուած է իր այս անյաղթելի արամադրութիւններուն մէջ :

Իմաստասիրական նոր մեթոտը . տիեզերքին ու մարդուն մասին իր յանդած եզրակացութիւններուն բնութեա՛քն իսկ , կը հակառակի բնազանցութեան : Այս երեւոյթին մէջ՝ ճշմարտութիւնն է որ կը կռուի ստութեան դէմ , եւ այս կռիւը կը յամեցնէ միշտ վերջնական յաղթանակը ճշմարտութեան :

Պիւհնէր անոնցմէ եղաւ՝ որոնք գիտցան ընդգրկել գիտութեան մեզի յանձնած ծանօթութիւնները զրական իմաստասիրութեան սկզբունքներուն համեմատ շահագործելու քաջութիւնը : Ինքը ժողովրդականացնել աշխատեցաւ իր երկասիրութեամբ գիտական ճշմարտութիւնը , որուն վրայ հիմնելով մեր դատողութիւնները տիեզերքին ու մարդուն ծանօթութեան նկատմամբ , կը պարտաւոր-

ուէինք մենք մոռնալ մեր մտաւորական հին ժառանգութենէն շատ բան , իբր սխալ , իբր անպէտ ու չնասակար :

Այս քաջասրտութիւնը , — պարզ ճշմարտութեան սէրը , ամէն ժամանակներու եւ ամէն ընկերութիւններու մէջ , հասարակաց կարծիքին առջեւ , նկատուած է ու կը նկատուի անբարոյականութիւն :

Պիւհնէրի ոճիւրը այդ էր :

Յառաջդիմութեան օրէնքին համեմատ , անդուլ կ'սիւ մը կայ ճշմարտութեան եւ ստութեան միջեւ : Այդ կռիւին դերակատարներն են գիտութեան քաջասիրտ ու անկեղծ հաւատաւորներն ու ստութեան եւ աղիտութեան կեղծապարիշտ ու դիմակաւոր պատաւազւորները : Վերջնական յաղթանակը սակայն միշտ ճշմարտութեանն է , որով իրաւունք ունին փառաւորուելու եւ հպարտանալու իր հալածուած ախոյեանները :

Յ. Գ. — Աւելորդ չըլլայ թերեւս տեղեկացնել Մաւիսի ընթերցողները թէ , յառաջիկային մտադիր ենք թարգմանաբար հրատարակել այս տեղ Պիւհնէրի Զօրութիւն եւ ճիւղ գործէն հատուածներ :

ՄԱՄՈՒԼԸ ԻՐ ԳԱՂԱՔԱԿՐԹՈՂ

ՕՌԿԱՆ ՄԸ(*)

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ



ԻԻԶԱՆԴԻՈՆ իր 876, 877 եւ 878 թիւերով հրատարակեց խմբագրական յօդուածներու շարք մը «գրականութեան եւ գեղարուեստին ամենօրեայ մամուլին մէջ ունեցած բաժինին վրայ» : Այդքան լուրջ եւ այդքան բազմակողմանի վերնադրի մը տակ կը սպասուէր , իբրեւ

հերքում այդ թերթը վարդի մտաւոր զարգացման մասին ըսուածներուն , լուրջ ու բազմակողմանի մտածումներու շարք մը , ներշնչուած պատմութեան իմաստասիրութենէն , ինչպէս նաեւ տնտեսական եւ ընկերական կեանքի զարգացման պատմութենէն : Սակայն այդ յօդուածներուն մէջ , որոնք թերթին ամբողջ 9-10 սիւնակները բռնած էին , չի գտանք այդ հերքումը : Ընդհակառակը այդ առթիւ աւելի մերկապարսնոց պարզուեցաւ մեր աչքին այն

(*) Բիւզանդիոնի 875 թիւով մեղ դէմ հրատարակուածին պատասխանը մենէ անկախ պատճառներով չպիտի կրնանք հրատարակել :

անձեռնհասութիւնը որով այդ թերթին վարիչը չի քաշուիր ամբողջ սիւնակներ լեցնելէ , ինդիւիւներու մասին , որոնք յստակ չեն իրեն :

Զգելով Արամ Անտոնեանին որ Մաւիւի ներկայ եւ յառաջիկայ թիւերով բացատրէ այն դերը զոր մամուլը մեր գրականութեան մէջ ունի , կ'ուզեմ ես ալ ի վեր հանել այս առթիւ առօրեայ մամուլի գործունէութեան մասին կարգ մը սկզբունքներ , որոնցմով աւելիկա ամենուրեք , ուր գոյութիւն ունի , ստացած է կամ ստանալու վրայ է քաղաքակրթող օղկանի մը դիրքը : Մասնաւորօրէն անխուսափելի կը դառնայ այդ սկզբունքներուն հրապարակաւ ճշգրտելը , քանի որ նոյն իսկ երկարամիայ փորձագութիւն ունեցող հրապարակագիրներ , կը թափն տակաւին ըմբռնած չըլլալ իրենց աստարտէզը վարող բոլոր սկզբունքները :

Մեր առօրեայ մամուլի հրապարակին վրայ գիտակից գործունէութեան մը սահմանները ճշգրտէն չեն գծուած , եւ անպակաս են անձեր որոնք առանց որ եւ է նախապատրաստութեան կը նետուին հրապարակագրական աստարտէզին մէջ , ճիշդ ինչպէս որ շատեր որ եւ է կերպով կեանքի մէջ յաջողած չըլլալուն համար ընդհանրապէս քահանայ կամ վարժապետ եղած են մեր մէջ :

Վերը յիշուած յոգեւածներուն մէջ Բիւզանդիոնին ինձ դէմ ըրած հայհոյութիւններուն չափօրէ պատասխանեմ , քանի որ անոնք որ եւ է հիմէ զուրկ ըլլալով աւելի իրեն դառնալու յատկութիւնը ունին : Միայն լրագրի մը , մասնաւորօրէ մեր մէջ ունեցած դերի մասին իր ըմբռնումը չունենալով որ եւ է լուրջ հիմ , կ'ուզեմ այս առթիւ ցոյց տալ իրեն թէ լրագրութիւնը լուր տալու , հետաքրքրութիւնը գոհացնելու մեքենայ մը չէ միայն , այլ մտածուած գործունէութիւն մը հանրային , անտեսական ու բարոյական կեանքին մէջ իր օգտակար ազդեցութիւնը ունենալու համար :

«Լրագիրը , կ'ըսէ Բիւզանդիոնի խմբագրութիւնը , ծնունդ է ամէն մարդու բան իմանալու , օրուան լուրերը լսելու , նորութիւններուն տեղեակ ըլլալու ընդոծին հետաքրքրութեան » Յետոյ քիչ մը վարը «կը հետեւի

թէ լրագիրն ամէն բանէ առաջ լուր կուտայ , Որքան աւելի զարգացած է հասարակութիւնը , լուրերուն սահմանը այնքան կ'ընդարձակի» եւ տակաւին նման խօսքեր այդ ամբողջ 10 սիւնակներուն մէջ :

Լուրը այսինքն իրողութիւնները , որոնք բովանդակ ընկերային կեանքի մը հիմը կը կազմեն , բնական է նաեւ որ պէտք է հիմը ըլլան այն բոլոր գործունէութիւններուն որոնք կը զբաղին այդ կեանքին հետ , ջանալով այդ տոթիւ բացատրել բոլոր իրողութիւնները եւ ցոյց տալ բոլոր միջոցները որոնցմով կեանքը աւելի կը բարգաւաճի , անկաստ իրողութիւնները կրնան նուազիլ , եւ ասով հրապարակագրի դերն ալ բարձրանալով պարզապէս լուր տուողի մը աստիճանէն , կը ստանայ աւելի բարոյական հանգամանք մը , հանրային պայմաններուն եւ կարծիքին վրայ ազդող , ուրիշ խօսքով , դառնալով հասարակութիւնները քաղաքակրթող միջոցներէն մէկը :

* * *

Այսօր , բոլոր քաղաքակրթ երկիրներու մէջ , արդի հաղորդակցութեան շղթային օղակներէն մին է օրաթերթը , այսինքն մին այն միջոցներէն , որոնցմով , ընկերութիւններու մէջ մտուոր ու նիւթական ինչքերը կը փոխանակուին , զանազան անհատներու միջեւ բարոյական յարաբերութիւն մը ստեղծելով :

Աւելի խորը թափանցել կարենալու համար այն դերին զոր ամենօրեայ թերթ մը կուչուած է այսօր կատարել , շատ հակիրճ կերպով քննենք այն պարագաները , որոնց մէջ լրագիրը իր ծնունդը առած է :

Հին ժամանակներուն պատկանող քաղաքային հասարակութիւնները լրագրի մը պէտքը չեն զգացած : Իրենց՝ հրատարակութեան համար ունեցած բովանդակ պահանջը կը գոհանար անդեկաբերներով եւ երբեմն ալ արձանագրութիւններով : Միայն երբ հռոմէական պետութիւնը կը տարածուէր Միջերկրականի բովանդակ ցամաքներուն վրայ , անոնց ուղղակի տիրելով կամ զայնա իր ազդեցութեան տակ առնելով , նաեւ պէտքը կը զգացուէր այն տեսակ միջոցի մը որ տիրող դասակարգին պատկանողներէն իբր պաշտօնա-

տար , իբր հարկահաւաք , իբր վաճառական դէպի զանազան գաւառներ գացողները իրութեան հետ յարաբերութեան մէջ դնէր , ամէնքն ալ հաղորդակից ընելով ամբողջ պետութեան մէջ տեղի ունեցած կարեւոր պատահարներուն : Նշանակութեան արժանի է սա կէտը որ Կեսար , հռոմէական զինուորական միապետութեան եւ վարչութեան կեդրոնացուման հիմնողը , նկատուած է այսօր նաեւ իբրեւ հիմնողը լրագրի նմանող հրատարակութեան մը : Լրագրի նմանող հրատարակութիւն մը կ'ըսեմ , որովհետեւ Հռոմէացիները արդի իմաստով լրագրութիւն մը չեն ունեցած :

Գերմանական ժողովուրդները , որոնք Հռոմէացիներէն ետքը կը ստանձնէին եւրոպայի պատմութիւնը վարելու գործը , հռոմէական պետութեան պահանջները չունէին , շարունակելու համար հռոմէական ձեւով լրագրական հրատարակութիւն մը : Բովանդակ միջին դարու մարդերու կեանքը կը սահէր սահմանափակ , գոցուած շրջանակներու մէջ , ընկերական եւ քաղաքական տեսակէտէն : Կրթութեան համար խնամատարութիւնը վանքերու որմերէն ներս կը քաշուէր եւ ամբողջ դարերու ընթացքին , ընկերութեան մէջէն միայն սակաւներու զբաղումը կը մնար Տնտեսագիտական փոխադարձ շահագործութիւն մը որ վանքի մը կամ քաղաքի մը պատերէն դուրս ելլելով կընար մարդիկը իրար կապել , գոյութիւն չունէր այդ ժամանակներուն մէջ : Այս շրջանէն վերջ է որ ծնունդ կ'առնեն ընդհանուր ընկերական կազմակերպութիւններ , իրենց հետեւանք ունենալով նաեւ բոլոր հաղորդակցութեան միջոցներու զարգացումը . այդ միջոցներէն մէկը եղած է նաեւ միշտ լրագրութիւնը :

Իր ծնունդին մէջ , այս եղած է ահա սկզբնական պատկերը լրագրութեան , այսինքն օռկան մը , որ փոխադարձ կերպով իրարմով շահագործուող անհատները , զասակարգերն ու յետոյ հասարակութիւնները իրարու հետ հաղորդակցութեան մէջ դրած է :

Սակայն , տակաւ մարդկութեան զսնազան մասերուն մէջ հաղորդակցութեան աւելի ներուժ դառնալով , լրագրութիւնը եւս իր

գործունէութեան մէջ բարդ հանգամանք մը ստացած է : Արդի լրագիր մը — բնական է եւրոպականներուն վրայ խօսելով — ամէն բանէ առաջ դրամական ձեռնարկութիւն մըն է , որուն մէջ շատ մը անձեր , աշխատութեան բաժանման օրէնքով իբր թղթակից , խմբագիր , գրաշար , սրբադրիչ , մեքենավար , ծանուցումներ հաւաքող , վարչական պաշտօնեաներ , ծառաներ եւն . միակ ուղղութեան մը տակ , վարձքի մը փոխարէն կ'աշխատին ընթերցողներու անորոշ թիւի մը համար . եւ իրենց բովանդակ ջանքը ոչ թէ անոր համար է որ իրենց թերթը հաւնեցնեն հասարակութեան , այլ օրպէս զի մրցին , լրագրական ասպարէզի վրայ դանուող միւս հրատարակութիւններուն հետ : Մեծ օրաթերթի մը իւրաքանչիւր թիւը , որ այսօր եւրոպայի մէջ հրատարակ կ'ելլէ , հրաշալիք մըն է դրամական կազմակերպութեան , անտեսադիտական աշխատանքի բաժանման եւ արհեստագիտական կատարելագործութեան միանգամայն : Ու այս տեսակ օրաթերթ մը կը ներկայանայ մեզ իբրեւ հաղորդակցութեան միջոց մը մտաւորական եւ գիտական կեանքին եւ օրպէս զի արդի օրաթերթ մը լիութի կատարէ իր այս գերը իրեն կ'աջակցին նաեւ երկաթուղիի ցանցերը , թղթատարական կազմակերպութիւնը , հեռագրական թելերը եւ հեռաձայնի հաստատութիւնները :

Մանաւանդ մեր դարու քաղաքակրթութիւնը որ ամէնէն աւելի իր համաշխարհային ձգտումներով կը յատկանշուի , արդիւնքը եղած է ամենալայն ըմբռնումով հաղորդակցութեան մը : Մարդկութեան անտեսական կեանքը անցած է այն տեսակ շրջաններէ , որոնց մէջ անիկա խումբ մը մարդոց , յետոյ քաղաքի մը , յետոյ ազգութեան մը սահմաններուն մէջ պարփակուած էր : Այսօր բովանդակ քաղաքակրթութեան աշխարհին համար , որ հաղորդակցութեան ամէն միջոցներով , ճամբաներով , հեռագրական թելերով եւ թղթատարական կազմակերպութեամբ օժտուած է , տիեզերական այն տեսակ կեանք մը գոյութիւն ստացած է , որ եւ ոչ մէկ քաղաքակրթութեան կրնայ ալիւս առանց միւսներէն ազդուելու , իր անկախ անտեսական

կեանքը շարունակել : Ինչ որ ճշմարտութիւն է այսօր ժողովուրդներու տնտեսական կեանքին համար , ճշմարտութիւն է նաեւ անոնց բարոյական եւ գիտական կեանքին նկատմամբ : Եւրոպայի մէջ , այսօր առօրեայ լրագրութիւնն ալ դարձած է հաղորդակցութեան միջոց մը , որով նախ միեւնոյն երկրին զանազան կեդրոնները կը կապուին իրարու հետ բարոյապէս եւ յետոյ կը հետեւին ամբողջ աշխարհի կեանքին , ուրկէ անկախաբար անկարող են իրենք իրենց գործառնութիւններուն ուղղութիւն մը տալ : Բայց օրուան լրագրութեան այն մասը որ ճանչցուած է իբր ամէնէն լուրջը եւ որ ամէնէն աւելի միջոց մըն է ժողովուրդներու ձեռք , իրարու վիճակի եւ գործունէութեան տեղեակ ըլլալու համար , չոր լուրեր չէ որ կը հրատարակէ , պարզապէս իր ընթերցողներուն հետաքրքրութիւնը գոհացնելու համար . ընտել . այլ իրողութիւնները հաղորդելէ վերջ , կ'աշխատի անոնց հոգեբանութիւնը պարզել , ու յետոյ , կարելի եղան սահմանի մը մէջ անոնց ազդեցութիւնն ու հետեւանքը ճշդել , յետոյ թեր եւ գէմ քննադատել իրողութիւնները , ցոյց տալու համար ինչ որ ճշմարտապէս օգտակարն է հանրութեան տեսակէտէն եւ ասով օգտակարին համար հանրային կարծիք մը գոյացնել իր շուրջ : Պարզ է թէ այս տեսակ ուղղութեամբ օրագրութիւն մը մանաւանդ երբ կը կատարուի ձեռնհաս անձերու կողմէ , որոնց մասին ամէնէն քիչ հաւանականութիւնը կրնայ ըլլալ որ իրողութեան մը հետեւանքները սխալ կերպով դատեն , պէտք է նկատուի քաղաքակրթող միջոցներէն մին : Որովհետեւ ինչ են միշտ այն աւելի կամ նուազ քաղաքակրթող միջոցները . ուրիշ ոչինչ , բայց եթէ այն ամէն բաները , որոնք մարդուն գիտակցութեամբ եւ ճիշդ դատողութեամբ մը գործել կուտան , իր ձեռնարկութիւններուն մէջ յաջողելու տեսակէտէն իրեն անհրաժեշտ եղած միջոցները ստեղծելու եւ կամ արդէն ստեղծուածները կիրարկելու համար :

Եւրոպական կամ ակնարկուած անգլիական լուրջ օրագրութեան համար երբեք կարելի չէ ըսել թէ անոնք իրենց ընթերցողներուն հետաքրքրութիւնը գոհացնելու նպատակով է միայն որ գոյութիւն ունին : Անգլիական լուրջ օրագրութիւնը , առաջնորդող դիրք մը ստացած է ամբողջ քաղաքակրթ տաշխարհի մասունքին մէջ , մանաւանդ իր խմբագրական յօդուածներու մասովը նաեւ այնքան կարեւոր երկրին ներքին քաղաքականութեան համար : Անգլիական առաջնակարգ թերթերու խմբագրական յօդուածներու մասին ձգտումն է ,

անխափր խօսելով մարդկային կեանքի բովանդակ երեւոյթներուն եւ իրողութիւններուն վրայ , տալ իր ընթերցողներուն այդ ամէնուն ճշգրիտ բացատրութիւնը ու յետոյ վարժեցնել զայն որ սկսին կեանքի տնտեսական , բարոյական եւ մտաւորական երեւոյթներուն առջեւ փոխանակ կրաւորապէս ամէն ինչ ընդունելու , քննելով ինքնուրոյն գաղափար մը գոյացնեն անոնց մասին :

Անգլիական լուրջ օրագրութեան խմբագրական յօդուածներու մասին մէջ է նորէն որ կանոնաւոր կերպով կը քննադատուին , բացի քաղաքական տնտեսական իրողութիւնները , նաեւ գիտական եւ գեղարուեստական հակումները որոնք երկրին մէջ կամ երկրէն դուրս կը թուին մարդկութեան աշխարհահայեցողութիւնը կազմելու մէջ կարեւոր դեր մը ունենալ :

Չուտ գրական մասն ալ իր շատ կարեւոր տեղը ունի եւրոպական օրագրութեան մէջ : Եւրոպական լուրջ օրագրութիւնները թերթները ծանօթ են արդէն ամէն անոնց որոնք հետեւած են եւրոպական լրագրութեան : Եւ մանաւանդ լրագրութիւնը օրը օրին տակաւ սկսած է այնքան ուժ տալ գրական արտագրութիւններուն իր սիւնակներուն մէջ , որ հրատարակուած գիրքերու թիւին տարուէ տարի ինչպիսիք գանգատը Չուտ եւրոպական դանդաղ մըն է : Եւ միեւնոյն ատեն ապացոյց մը որ եւրոպական օրագրութիւնը շատ կարեւոր տեղ մը ստեղծ է գեղարուեստական գրուածքներու . այսինքն երաժշտական , նկարչական , քանդակագործական եւ գրական յօդուածներու , որոնք ամէնքն ալ իրազեկներու կողմէ գրուած , ամէն օր անպակաս են եւրոպական առօրեայ մասունքին մէջ :

Ու ասով օրագրութիւնը Եւրոպայի մէջ կրցած է այն աստիճան ստատարել քաղաքակրթութեան : Ինչ աստիճան որ կը սպասուէր տպագրական գիւտէն , որ կուգար , նոյն իսկ կրնանք ըսել , յեղաշրջել մարդկային ճակատագիրը :

Եւ ելլել տպագրական գիւտին ամէնէն հզօր գործադրիչը , առօրեայ մասունքը պարզապէս ամէնուն հետաքրքրութիւնը գոհացնող գործիք մը նկատելը զուրկ է որ եւ է լայն ըմբռնումէ :

Յառաջիկայ յօդուածով մը պիտի ջանամ ճշդել այն դերը զոր առօրեայ մասունքը մեր մէջ պէտք էր ստանձնել , եւ ասոր համար արդէն պատրաստուած մարդիկ , գործի գլուխ անցնելով անոր գործադրութեանը պարտ էին աշխատել :

ՄԱՄՈՒԼԻՆ ԴԵՐԸ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ՄԱՍԻՍԻ վերջին միացեալ քիւերուն մէջ հրատարակուած «Դաս մը» յօդուածին առթիւ, Պոլսահայ լրագրութեան ամենամին գործօն ներկայացուցիչներէն մէկը՝ Բիւզանդ Քեչեան, յաջորդական յօդուածներու շարք մը հրատարակեց իր քերթին մէջ(*), բացատրելու համար քէ ի՞նչ է «գրականութեան եւ գեղարուեստի բաժինը ամենօրեայ մամուլին մէջ:» Թէ որ-չա՛րհի հիմնաւոր են իր տուած բացատրութիւնները, ասիկա պիտի տեսնենք քիչ մը ետքը. անկէ առաջ ես ինձի պատճախով համարիմ յայտարարելու քէ այս յօդուածին մէջ բնաւ չի պիտի զբաղիմ այն աւելի կամ նուազ նախաստիճիկ տպերով՝ որոնցմով անիկա գիտէ գնահատել ամեն նոր գրող: Զուտ գրական վիճաբանութեան մը մէջ աւելի լաւ պիտի ըլլար գաղափարի տեսակէք միայն աչքի առջեւ ունենալ եւ անով միայն զբաղիլ, ինչ որ պիտի շեշտէր գրուածին կարեւորութիւնը ու մանաւանդ աւելի օգտակար հանգամանք մը պիտի տար անոր:

Ա.



Բ որոշ մասերուն մէջ քննելէ առաջ վերոյիշեալ երեք յօդուածները, մատնանիշ կ'ընեմ հոս այն խոր տգիտութիւնն ու պայմանադրական գաղափարները զորս Բիւզանդիոնն ունի գրականութեան, գեղարուեստին ու մա'ուլին վրայ:

Դիտողութեան առաջին կէտը զոր կը գրանեմ այդ յօդուածներուն մէջ, սա ամենայայտնի ճշմարտութիւնն է թէ «գրականութիւնն եւ գեղարուեստ կան եւ են» լրագրութենէն անկախաբար»: Քիչ չատ զարգացած մէկը կա՞յ արդեօք որ անգիտանայ այդ բանը. ո՞վ ա-գոր համոզուելու համար պէտք ունի այն անգիտակցաբար ու անժամանակ կերպով տրուած անուններու շարքին՝ որուն մէջ Հոմէրոսն ու Պոնապարթը, Շէքսպիրն ու Փիղիասը, Տանդէն ու Բէրիքէսը, ու վերջապէս Միքէլ Անճէլօ, Պուալօ եւ Մօլիէր զարմացած աչքերով իրարու կը հայնին՝ կարծես հարցնելու համար թէ ի՞նչ պատահութիւն զի-րենք այդպէս քով քովի կրնար բերել: Բացատրելու համար թէ լրագրութիւնն ու գրա-

կանութիւնը իրարմէ անկախ բաներ են, ի՞նչ պէտք կար ըսելու թէ Հոմերոս իր դիւցազ-ներգութիւնները լրագրի մը մէջ չէր տպած եւ կամ ոչ մէկ օրագրող քաջալերած էր Փի-ղիասը: Այս տեսակ փաստի մը պէտք չու-նէինք կարծեմ, համոզուելու համար թէ «գրականութիւնն եւ գեղարուեստ կան ու են» լրագրութենէն անկախաբար:

Եւ սակայն, որչափ ալ հիմնաւոր ըլլայ այդ խօսքը, ընդհանուր առումով միայն կըր-նայ իւր զուտ ճշմարտութիւն մը ընդունուիլ. որովհետեւ, շարքեր միջազայրեւոր եւ շար-քեր պայտնանեւոր մէջ գրականութիւնն ու գեղարուեստը անկախ չեն մնար շրագրու-թեանէն. պարագայ մը՝ որ մանաւանդ մեզի համար վերին աստիճան յայտնի ճշմարտու-թիւն մըն է: Անհերքելի իրողութիւն մըն է սա պարագան թէ մեր մէջ գրականութիւնը իր ամէնէն ծաղկած աստիճաններուն իսկ միշտ առօրեայ լրագրութեան եւ շատ անձուկ կեր-պով ալ հանդէսներու մէջ սահմանափակուած է: Թղթատեցէ՛ք վերջին տասը տարիներու մէջ եւ անկէ ալ առաջ հրատարակուած թեր-թերու հաւաքածոները, ու պիտի տեսնէք որ մեր բովանդակ գրականութիւնը հոն մնացած է, լրագրի սիւնակներու մէջ խտացած: Ո՞ւր են Զօրայեանի, Օտեանի, Միսաքեանի, Տէմիր-ճիպաչեանի եւ դեռ այնչափ ուրիշներու լա-

(*) Բիւզանդիոն Թիւ 876, 877, 878:

ւազոյն հրատարակութիւնները : Եթէ երբեք
բանալու ըլլաք Իւթիւճեանի խմբագրութեամբ
հրատարակուած Մասիս օրաթերթին տնօրէն-
նութիւն հատորները , անոնց մէջ պիտի գտնէք
է՛ն լուրջ դասերը Զօրայեանին , է՛ն գեղեցիկ
կտորները Օտեանին , է՛ն լաւ գրուածքները
Միսաքեանին , է՛ն շատ յօգուածները Տէմիր-
ճիպաշեանին ու բազմաթիւ գրողներու սրտք
իրենց ամէնէն խնամուած արտագրութիւն-
ները թողած են անոնց մէջ : Քրքրեցէ՛ք
Արեւելքի հաւաքածոն ու 10-15 տարուան
գրականութեան մը բովանդակ արտագրու-
թիւնը պիտի գտնէք անոր ծալքերուն տակ :
Բացէ՛ք Հայրենիքի վերջին շրջանը ու ձեր
աչքին առջեւ պիտի ունենաք այս օրուան
լաւագոյն գրողներու եւ ուրիշներու ալ գրա-
կան արտագրութիւնները : Ո՛րք են Զօ՛րայե-
անի , Միպիլի , Հրատարակչի , Տիգրան Ար-
փիարեանի , Կամսարականի , Քէլէկեանի եւ
գեռ այնչա՛փ ուրիշներու գրուածքները : Բիւ-
զանդիոնէ վատ կա՞յ մէկը որ իր պաշտպանել
ուզած thèse-ը արդարացիաբար համար ուրանայ
թէ լրագիրներու մէջ չեն գտնուիր անոնք :

Այս պայմաններով ինքնին որոշակի չի՞
տեսնուիր թէ մեր մէջ մամուլը ահագին ըն-
դունարան մը եղած է գրականութեան , թէ
գրականութիւնը մամուլին շնորհիւ միայն
կրցած է առաջանալ , այսինքն անով ապրած
է : Կարելի՞ է ըսել թէ առանձին հրատարա-
կութիւնները ու Հանգեաները կրցած են հա-
կալիչաբար առօրեայ մամուլին ունեցած այդ ազ-
դեցութիւնը . քանի՞ վերք կը յիշէք հիներէն,
անոնցմէ ի՞նչ հասած է մեր ձեռքը . գրեթէ
ոչինչ . հազիւ քանի մը հատոր՝ եւ անոնք
ալ անգտանելի : Իսկ վերջին տարիներու մէջ
լոյս տեսած կարեւոր գիրքերէն ո՞րը իբր ա-
ռանձին հրատարակութիւն հրապարակ հան-
ուած է , անոնցմէ ո՞րը մամուլի աւազանէն
չէ մկրտուած , ո՞րը լրագիրներէ չէ արտա-
տպուած : Զօ՛րայե- « Անհետացած սերունդ
մը » , Օրիորդ Ալիսի (Միպիլ) « Աղջկան մը
սիրտը » , Կամսարականի « Վարժապետին ազ-
ջիկը » նախապէս թերթերու մէջ հրատարակ-
ուելէ ետքը միայն առանձին հատորի վերած-
ուած են , ինչպէս նաեւ գեռ շատ մը ու-
րիշներ : Կարելի՞ է ուրանալ , անգիտանալ

ասոնք : Եւ սակայն ահաւասիկ Բիւզան-
դիոնի՛ այդ մասին գրած տողերը . « Կ'հաս-
« կընա՞ք , պարոններ , թէ ո՛րքան չարաչար
« կ'ստալիք՝ երբ ձեր իբր թէ պաշտած Գրա-
« կանութիւնն ու Գեղարուեստը կ'ընէք սա
« երեկուան լրագրութեան պոչին կ'կապէք :
« Կ'հասկնա՞ք թէ ո՛րքան քիչ պատմական ի-
« մաստասիրութիւն կայ ձեր ճամարտակու-
« թեանց (? ? ? ! !) մէջ , երբ կ'կարծէք թէ
« Ազգի մը մէջ Գրականութիւն եւ Գե-
« ղարուեստք ծնունդ կ'առնուն կ'ուճանան
« եւ կ'արգաւաճին , կամ բոլորովին ետ
« կ'մնան ու կ'իյնան՝ մի ո՛ր եւ իցէ լրագրա-
« պետի կամ խմբագրի ազդեցութեան ներ-
« քեւ : » Այն հիմնաւոր բառերը գործ մէջ
բերի քիչ մը առաջ , բացատրութեան կարօտ
չեն թողուր սա կէտը՝ թէ մեր գրականու-
թիւնը միշտ լրագրութեան մէջ սահմանա-
փակուած է . անիմաստ գործ մը պիտի ըլլար
ասիկա ուրանալը ⁽¹⁾ : Գալով այն տեսակէտին
թէ « մի ո՛ր եւ իցէ լրագրապետի ազդեցու-
թեան ներքեւ գրականութիւն կամ գեղար-
ուեստք կը քարգաւաճին կամ ետ կը մնան » ,
առիկա ալ շատ մեծ ճշմարտութիւն մըն է
մեզի համար . պիտի բացատրեմ թէ ինչո՞ւ :

Եւրոպական լրագրութեան մէջ , իւրա-
քանչիւր թերթ ունի իր մասնագէտ խմբա-
գիրները՝ որոնցմէ ամէն մէկը իր որոշ ճիւղին
կը խառնուի խմբագրատան մէջ՝ կատարեալ
անկախութեամբ . խմբագրապետը մի՛ միայն
թերթին ընդհանուր ուղղութեամբ կը զբաղի՝

(1) Տարբեր տեսակէտներով լրագրութիւնը եւրո-
պայի ու մասնաւորաբար Յարմայի մէջ միշտ իր որոշ
գերը ունի գրականութեան մասին . օրուան ամէնէն
նշանաւոր գրողները՝ նախապէս թերթերու միջոցաւ կը
հրատարակեն իրենց գրուածքները՝ տարուէ տարի զա-
նոնք գիրքի վերածելէ առաջ . ինչպէս նաեւ է՛ն կարեւոր
վէպերն անգամ՝ նախ իբր թերթօն կը հրատարակուին :
Այս կերպով , լրագրութիւնը գրականութիւնը տարա-
ծելու մեծ գործը կը ստանձնէ , քանի մը տասնեակ հա-
զարաւոր ընթերցողներու կարգացնել տալով ո՛ր է
գրական արտագրութիւն մը , որ գիրք տպուած առեն
հազիւ քանի մը հազար ընթերցող միայն պիտի գտնուի :
Ուրիշ տեսակէտով , ժողովուրդին միտքը նրբացնելու եւ
հասկացողութիւնը ազնուացնելու գործ մըն ալ կա-
տարած կ'ըլլայ լրագրութիւնը , ինչ որ մեծ բան մըն է
ինքնին : Ա. Ա.

առանց ունենալու ո՛ր եւ է կաշկանդիչ նկատում՝ կապտելու համար իրեն աշխատակցող խմբագիրներուն գաղափարի ազատութիւնը ⁽²⁾։ Այս պայմաններով, գրական, պատմական, քաղաքական, գեղարուեստական, տնտեսական ու վերջապէս ամէն խնդիրներու մասին լրագրութիւնը կը բռնէ գիտակից ուղղութիւն մը եւ մասնագէտ խմբագիրներու շնորհիւ քմահաճօրէն չընթանար այս կամ այն խնդրին մէջ, որով իր որոշ ազդեցութիւնը կ'ունենայ տնտեսական մասին։ Մեր մէջ սակայն, լրագրութիւնը ունի շատ ողորմելի կազմակերպութիւն մը։ ո՛չ թէ միայն մասնագէտ խմբագիրներ պահելու գրութիւնը չէ ընդունուած, հապա նոյն իսկ այն միակ անձն այ՝ որ թերթը կը վարէ, — այսինքն խմբագրապետը, — ունի բազմաթիւ նկատումներ՝ ընդհանրապէս դրամական՝ որոնք զինքը կը կաշկանդեն իր գաղափարներուն մէջ եւ յաճախ կը ստիպեն որ ձիւղ իր մտածածին հակառակ կերպով խօսի ո՛ր եւ է խնդրի վրայ։ Այս տեսակէտէն զատ, ինքնին կատարեալ յետադիմութիւն մըն է միակ անձի մը թողուլ գրական, պատմական, գեղարուեստական, տնտեսագիտական, քաղաքական, գիտական, եւլն. խնդիրներու վարչութիւնը, որովհետեւ մարդ մը՝ որչա՛փ ալ զարգացած ըլլայ, նախ չի կրնար բոլոր առոնց մասին ձեռնհասօրէն խօսելու կարող ըլլալ, ինչ յետոյ, — ինչ որ ամէնէն կարեւորն է, — չի կրնար օրը օրին հետեւիլ այդ խնդիրներէն իւրաքանչիւրին ստացած նոր երևույթներուն։ Արդ, ո՞վ է այն լրագրապետը որ կրնայ յաւակնիլ թէ կարող է ձեռք առնել այդ բոլոր խնդիրները։ ո՞վ կրնայ հերքել սա պարագան թէ մեր մէջ, մասնագէտ խմբագիրներու գրութեան անտես առնուելուն

(2) Տեղն է շեշտել թէ կիսամեայ Մասիս կը խմբագրուի այն տեսակ ուղղութեամբ մը, որ անոր բովանդակութեան իւրաքանչիւր մասը յանձնուած է մասնագէտի մը ձեռնհասութեան։ ԽՄԲ. ԾԱՆ.

հետեւանքով, լրագրութիւնը բռնած է քմահաճ ու անգիտակից ուղղութիւն մը եւ թէ ամէն խնդրի մէկ օրէն միւսը տարբեր հասկացողութեամբ մը կը ներկայացուի։ Ո՞վ չի խստովանիր թէ այդ ուղղութիւնը ողորմելի արդիւնք մը միայն կրնայ առաւել, ինչ որ ինքնին կ'ապացուցանէ թէ «մի ո՛ր եւ է լրագրապետի ազդեցութեան ներքեւ գրականութիւնն ու գեղարուեստները (ինչպէս նաեւ միւս բոլոր խնդիրները) կրնան յետադիմել»։ Ես ինքս, միայնուն խմբագիր ըլլալով օրաթերթի մը մէջ, ծանօթ եմ մեր բոլոր թերթերու ներքին կազմակերպութեան, որով կրնամ աւելի բացայայտ խօսիլ այս տեսակէտին վրայ ու վեր հանել դեռ ուրիշ աւելի կարեւոր պատճառներ ալ։ Եւ եթէ շատ չեմ ծանրանար, պատճառը տեսակ մը պաշտօնի գաղտնապահութիւն է՝ զոր պարտաւոր եմ յարգելու։ Այլապէս՝ պիտի կրնայի հոս երեւան հանել բոլոր այն նկատումներն ու պայմանները, — ամէնքն ալ լրագրի վարչութեանց կողմէ յարուցուած, — որոնց ենթարկուած են մեր բոլոր թերթերը, եւ որոնց պատճառաւ ամէն խնդիր, ինչ որ ալ ըլլայ իր բնութիւնը, կը հպատակեցուի անիմաստ ուղղութեան մը՝ որուն մէջ կը տարուբերի եւ ապահովաբար դէպ ի բարգաւաճում չի տանիր։

Այս ամէնէն յայտնի կ'ըլլայ ուրեմն՝

1. Թէ մեր գրականութիւնը կապուած է լրագրութեան,

2. Եւ թէ ո՛ր եւ է լրագրապետի մը անհեռահասութիւնը, իր կոչումին անպատրաստութիւնը եւ մանաւանդ սահմանափակ միտքը՝ մասնագէտ խմբագիրներու գոյութիւն չունենալուն պատճառաւ կրնայ վատթարացնել չէ՛ թէ միայն գրականութիւնն ու գեղարուեստը, հապա նաեւ այն միւս բոլոր խնդիրներն ալ՝ որոնց մով լրագիր մը կը զբաղի ^(*)։


(*) Մնացեալը յառաջիկայ թիւով։



Գ Ր Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

Dr. Մ. Վ Ա Հ Է

I. Գիշուքիւն , քարգնանուքիւն Գերմանե-
րենե . II. Մանչերու քեւամիւն , Դրեց
Յովսէփի Տեր-Ստեփանեան



ԵՐ կեանքը մօտէն ու-
սումնասիրելու , անոր մէջ
մուտ գտած եւ արմա-
տացած չարիքները մտանանիչ ընելու եւ ա-
նոնց դարման . Ը տանելու գովելի ջանքը եր-
թալով կը շեշտուի . եւ ասոր իբրեւ ապա-
ցոյց ահա միաժամանակ երկու նոր առողջա-
պահական հրատարակութիւններ կ'երեւին .
մին Գիշուքիւն անուան տակ , թարգմանուած
գերմաներէնէ , իսկ երկրորդը Մանչերու
թշնաւիւն վերնագրով , աշխատասիրուած մի
հայ բժիշկէ (Յովսէփ Տէր Ստեփանեան) :
Կարգացի երկու գործերն ալ եւ պէտք է
խոստովանիմ , թէ երկուքը եւս սահման-
ուած են թանկագին ծառայութիւններ մա-
տուցանելու մեր մատաղ սերունդին , ցոյց
տալով դաստիարակներուն եւ ծնողքնե-
րուն բոլոր վստահները որոնց մանուկ-
ները կ'ենթարկուին երբ գիշութեան կը հե-
տեւին եւ գործնական միջոցներ առաջար-
կելով դանոնք այդ մօլութենէ զգուշացնելու
համար . Երկու աշխատութիւններն ալ սա-
հուն եւ մաքուր աշխարհաբարով գրուած են ,
եւ իրենց ամփոփ կարծութիւնը , իրենց նիւ-
թին փափկութիւնը եւ շահեկանութիւնը առ-
բակոյտ չեն թողուր , թէ մեծ հետաքրքրու-
թեամբ եւ արտօմանօք պիտի կարդացուին
մանկութեան ամէն բարեկամ անձերէ :

Գերմանացի բժիշկ հեղինակը որ անանուն

մնալ ուզած է , բաժնած է իր գործը ինը
գլուխներու որոնց մէջ յաջորդաբար կը խօսի,
թէ ինչպէս մանուկը պատանեկութեան մէջ
կը թեւակոխէ , թէ ինչ է գիշութիւնը , թէ
անպատճառ հարկ է պատանին լուսաբանել
գիշութեան աղիտաբեր հետեւութիւններուն
վրայ : Մի գեղեցիկ խրատական եւ քաջալե-
րական կը ընու ամբողջ Ե. գլուխը , ուղղուած
բոլոր այն երիտասարդներուն որոնք կը հետե-
ւին գիշութեան եւ կամ թէեւ արդէն գիշութենէ
ազատած , սակայն սաստիկ խղճահարութիւն-
ներէ եւ տարակոյտներէ կը տանջուին իրենց
ապագայ առողջութեան եւ առնական կարո-
ղութեան մասին : Զ. գլուխը մայրերու ուղ-
ղուած է եւ շատ օգտակար խրատներ կը
պարունակէ : Շատ շահեկան է նաեւ Ը.
գլուխը Բռնժուր մակագրուած իւր լրացու-
ցիչ մասովը , ուր հեղինակը իրաւամբ զիտել
կուտայ , թէ ժողովրդային-բժշկութեան գըր-
քերու մեծագոյն մասը իմաստակ անձերէ
գրուած է , թէ պէտք չէ վստահիլ այդ ան-
ձանց որոնք հիմնական ուսում չեն առած ,
այլ միայն հարեւանցի ծանօթութիւն մ'ունին
արուեստին վրայ : Նոյն գլխուն մէջ մի քիչ
աւելի յառաջ կը յայտնէ , թէ պէտք է վստա-
հութիւն ունենալ բժշկին վրայ եւ վստահու-
թիւն ցոյց տալ անոր : Ամէն բան պէտք է
յայտնել անոր , ամէն ինչ որ կը նեղէ զքեզ
այժմ եւ այն ամէն բաները որոնցմէ կը վախ-
նաս ապագային համար :

Այն ատեն , ահա , անիկա կատարելապէս
ճանչելով զքեզ , օգտակար կրնայ ըլլալ քեզի :

Մանչերու թշնաւիւն գրքոյկին հեղինակը
մօտէն ծանօթ է մեր դպրոցական կեանքին
թէ իբրեւ նախկին գիշերօթիկ աշակերտ եւ
թէ իբրեւ այժմեան բժիշկ Պարտիզակի բարձ-
րագոյն վարժարանին : Ինքը շատ բան լսած
եւ տեսած է մեր հայ կեանքին մէջ եւ իւր

պատմածները եւ առաջարկածները ուղղակի իւր փորձառութենէն կը բղխին, որով իւր աշխատութիւնը մի առանձին արժէք եւ շահեկանութիւն կ'առանայ մեզ համար: Իւր գրքոյը կը շօշափէ դպրոցական առողջապահութեան մի շատ կարեւոր կէտը եւ ջերմապէս յանձնարարելի է որ հայ դաստիարակները անպատճառ այդ գրքոյկէն ունենային իրենց քով եւ ուշադրութեամբ հետեւէին ահոր մէջ պարունակուած օգտակար խորհուրդներուն: Դպրոցական կարգադրութիւններ վերնագրին տակ հետեւեալ միջոցները կ'առաջարկէ գիշութիւնը անկարելի ընելու համար վարժարաններու մէջ. 1. Կատարեալ հսկողութիւն աշակերտաց վրայ. 2. Մեծ եւ պզտիկ մանչերու միջեւ մտերմութեան արգելք. 3. Դուրս երթալու արգելք դպրոցի պահերուն. 4. Ստիպողական զբաղումներ. 5. Կարգաւոր չքաջալերել պարապուրդի միջոցին. 6. Խուցերու ջնջումը գիշերօթիկ վարժարաններու մէջ. 7. Ստիպել որ տղաք առաւօտուն ժամանակին ելնեն եւ 8. Տաքատները առանց գրպանի ընել:

Դրքոյը կը վերջանայ բարոյական յորդորի կարեւորութեան նուիրուած մի գլուխով:

Տարակոյս չկայ որ առաջարկուած միջոց-

ները կատարելապէս նպատակաւարմար են գիշութեան հետեւիլը անկարելի ընելու համար՝ մանուկներուն եւ պատանիներուն: Եւ կը փափաքէի որ մարմնական մարզանքներուն եւ խաղերուն շատ աւելի լայն տեղ տրուէր մեր վարժարաններուն մէջ, թէ դասերէ դուրս միջոց չտալու համար մատաղ սերունդին որ գիշութեան հետեւի, եւ թէ անոր ֆիզիքական զարգացմանը աւելի եւս ուժ տալու համար: Նաեւ անկողինները պէտք է որ պինդ ըլլային, որոնք երբ կակուղ են, կարող են սեռային հեշտութեան զգացումը շուտով արթնցնել եւ հեղհեղէտ սրել մանկանց մէջ, եւ այսպէս անուղղակի մանուկները դէպի գիշութիւն առաջնորդել:

Երկու գործերն ալ կատարեալ համակրութեամբ կ'ողջունեմ իրրեւ լուրջ եւ օգտակար աշխատութիւններ. միայն կը վախճամ որ Մանչեռն թշնամին իւր սուղ գնովը (5 զրուշ մի օրինակը, մինչդեռ միւս աշխատութիւնը հակառակ իւր աւելի մեծ ծաւալին միայն 2 զրուշ կ'արժէ) չգտնէ այն ժողովրդականութիւնը որուն կատարեալ իրաւունք ունի:

Երկու գրքոյկներուն մաքուր եւ սիրուն տպագրութիւնը պատիւ կը բերէ Մատթէոսեան տպարանին:

Ո Ւ Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ն Ե Ր ()

ՀԵՆՐԻԻԲ ԻՊՍԵՆ

Բասթոր Մանեքու. Այո՛, ես գիտեմ, էնկադրանա: Այդ կոպիտ մարդիկը զԶեղ սանդուղներէն վար նետեցին: Այդ պատահար արդէն յաճախ ինծի պատմած էք: Զեր ըրածին հետեւանքը պատուով կը կրէք:

Էնկադրանա. Այդ բանով ես չեմ պարծենար, պարոն Բասթոր: Բայց ի՞նչ պատմել ուզածս սա է որ, այն ատեն Եօհաննան ինծի կը դիմէր եւ ինծի կը վստահէր իր դժբաղդու-

թիւնը, արցունքներու մէջ եւ կտրկափող ափառներով զայն պատմելով: Պէտք է ըսեմ, պարոն Բասթոր որ այդ պատմութիւնը մինչեւ հոգւոյս խորերը ինծի վիշտ կը պատճառէր:

Բասթոր Մ. Իրա՛ւ կ'ըսէք, էնկադրանա: Շատ աղէկ, յետո՛յ:

Էնկադրանա. Այո՛, այն ատեն ես ալ իրեն կ'ըսէի: Ամերիկացին ովկիանոսին վրայ է ար-

դէն եւ դուն Եօհաննա , կ'ըսէի իրեն , դուն մեղք մը գործած եղար եւ անկեալ մըն ես այլեւս : Բայց Եաքոպ Էնկադրանտը , կ'ըսէի , անիկա իր երկու ռաքերուն վրայ կանգուն կը մնայ . . . Այս ամէնը կ'ըսէի պարոն Բասթոր , տեսակ մը հաւասարակշռութիւն յառաջ բերելու համար :

Բասթոր Մ. Արդէն կը հասկնամ . յետո՞յ Էնկադրանտ . Այո՛ , իր անկեալ վիճակէն վեր կ'առնէի զինքը եւ պատուաւոր կերպով հետը կ'ամուսնանայի , որպէս զի ամէն մարդ չիմանար , թէ անիկա ինչպէս օտարականի մը հետ մոլորած էր :

Բասթոր Մ. Շատ աղէկ ըրեր էք այդ բանը : Միայն չեմ կրնար համաձայն գտնուիլ , որ դուք այդ առթիւ զրամ առնէիք անկէ եւ . . .

Էնկադրանտ . Դրա՞մ , ե՞ս . ոչ իսկ կուտ մը :

Բասթոր Մ. (Հարցալու էրպով մը Դէյ Է Տէյն Ալլէնի Դաւանալով) . բայց . . .

Էնկադրանտ . Այո՛ , այո՛ . . . կեցէք , հիմա՛ միտքս ինկաւ ինչ ըլլալը : Եօհաննա քանի մը չիլին ունէր , բայց այդ մասին լսել անգամ չէի ուզեր : Կեղտո՞տ բան , կ'ըսէի , մամոնա՞ն , մեղքերո՞ւ պատճառ , այդ ուսկին . . . կամ թէ թերեւս թղթադրամ էր առիկա նորէն Ամերիկացիին քիթին բերին կը նետենք , կ'ըսէի : Բայց անիկա արդէն մեկնած էր եւ աներեւոյթ եղած ամէնի ծովուն մէջ , պարոն Բասթոր :

Բասթոր Մ. Իրա՞ւ կ'ըսէք , բարի էնկըսդրանտ :

Էնկադրանտ . Բուն պատմութիւնը այս է , պարոն Բասթոր : Եւ կրնամ ըսել որ ես Ռէ-կինէի համար անկեղծ հայր մը եղած եմ , . . . ուժերուս ներածին չափովը . . . որովհետեւ ես դժբաղդաբար տկար մարդ մըն եմ :

Բասթոր Մ. Դեռ ի՞նչ կայ ըսելիք , տեսնենք , սիրելի Էնկադրանտ

Էնկադրանտ . Բայց սա կէտը կրեամ ըսել , որ ես մանուկը վախով մոծցուցած եմ եւ ուղործած հազի Եօհաննային հետ ալ սիրով տունն ի վեր ապրած եմ , ինչպէս որ ալ գրուած կայ այս ամէնքը : Բայց սա բանը բնաւ մշտնադէս չէր անցներ որ ես պէտք էի Բասթոր Մանտէրսին երթալ պարծենալու համար եւ

իրեն ըսել , որ ես ալ կեանքիս մէջ լաւ գործ մը ըրած եմ : Ոչ . եթէ Եաքոպ Էնկադրանտի այդ տեսակ բան մը պատահի , անիկա աղէկ մը կը լռէ : Դժբաղդաբար այդ տեսակ բան մը յաճախ չի պատահիր : Եւ եթէ ես պարոն Բասթորին երթամ միայն տկար ու չուսու բաներու մասին է որ կը խօսիմ : Որովհետեւ վերջերս ըսածս նորէն կը կրկնեմ որ . . . խղճմտանքը կրնայ երբեմն մէկը չարաչար տանջել :

Բասթոր Մ. Ձեռքերնիդ ինծի տուէք , Եաքոպ Էնկադրանտ :

Էնկադրանտ . Տէր Յիսուս Քրիստոս , պարոն Բասթոր :

Բասթոր Մ. Ոչ մէկ փախուստ (էր յետէ) : Այսպէս լա՛ւ է :

Էնկադրանտ . Եւ եթէ ես պարոն Բասթորէն խոնարհաբար ներողութիւն ինչորեւ ուզէի . . .

Բասթոր Մ. Դո՛ւք . Ո՛չ , ընդհակառակը , ե՛ս պէտք է որ Ձեռնէ ներողութիւն խնդրեմ . . .

Էնկադրանտ . Ո՛չ . Տէր ողորմեա՛ :

Բասթոր Մ. Այո՛ , իրաւ կ'ըսեմ : Եւ սըրտանց կ'ընեմ այս բանը , Ներեցէք ինծի : որ Ձեր մասին այնքան զէշ գաղափար կը կազմէի : Եւ տար Աստուած որ ես չուտով կարող ըլլայի ապացոյցը տալ Ձեր վրայ ունեցած վատահոլութեանս ու բարի տրամադրութիւններուս . . .

Էնկադրանտ . Պիտի հաճէի՞ք այդ բանը ընել , պարոն Բասթոր :

Բասթոր Մ. Ամէնէն մեծ հաճոյքով . . .

Էնկադրանտ . Ուրեմն այդ մասին առիթը պատրաստ է : Այն օրհնեալ զրամով , զոր ես այստեղ խնայելով հաւաքեցի , ատով կը մտածեմ քաղաքին մէջ , նաւաստիներու համար բանկ տեսակ մը տեղ բանալ :

Տիկին Ա. Այդ տեսակ բանի մը միտք ունիք :

Էնկադրանտ . Այո՛ , բանալիքս տեսակ մը ապաստանարան կ'ուզէի որ ըլլար : Փորձութիւնները այնքան բազմազան են նաւաստիի մը համար , երբ ոտքը հաստատուն հողի վրայ կը դնէ : Բայց իմ տանս մէջ , այս տեսակ տան մը մէջ , կը մտածեմ որ կերպով մը հօր մը հսկողութեան տակ եղածի պէս պիտի ըլլար :

Բաւարոր Մ. Ի՞նչ կ'ըսէք այս մասին ,
Տիկին Ալվինկ :

Էնկադրանքս Ունեցածս շատ չէ , որով
պէտք է սկսիմ . Աստուած աղէկ ընէ . բայց
եթէ բարեբար մը ինծի ձեռք երկնցնէր , այն
ատեն

Բաւարոր Մ. Այո՛ , այդ խնդրին վրայ քիչ
մը աւելի մօտէն մտածենք : Ձեր մտադրու-
թիւնը ինձ շատ բան կ'ըսէ Բայց հիմա
վար գացէք անգամ մը եւ կարգի դրէք ամէն
բան : Լոյս վառեցէք . որպէս զի քիչ մը հան-
դիսաւոր երեւոյթ ստանայ : Անկից վերջ միա-
սին հաշտութեան գեղեցիկ ժամ մը պիտի ան-
ցընենք սիրելի էնկադրանտ , որովհետեւ հիմա
իրաւ կը հաւատամ որ դուք լաւ տրամադ-
րութեան մէջ էք :

Էնկադրանք . Ինծի ալ այնպէս կ'երեւայ .
այո՛ : Ուրեմն մնաք բարով , Տիկին Ալվինկ ,
շնորհակալ եմ Ձեզ ամէն բանի համար : Ռէ-
կինէս ալ լաւ պաշտպանեցէք : (Արջաւիճի մը
կը «բէ» : Եօհաննային զաւակը հը՛ , դար-
մանալի բան է բայց ինծի այնպէս կու-
գայ որ ուղղակի իմ սրտիս կտորն է : Այո՛ ,
այո՛ , այնպէս է : (Բարեւելով , շախախէնէպէ՛
համբո՛ղ կը յեկնէ) :

Բաւարոր Մ. Տեսնենք , ի՞նչ կ'ըսէք հիմա
այս մարդուն նկատմամբ , Տիկին Ալվինկ : Ա-
սիկա բոլորովին տարբեր բացատրութիւն մըն
էր զոր լսեցիք :

Տիկին Ա. Այո՛ , իրաւ ալ այդպէս էր :

Բաւարոր Մ. Ահաւասիկ անգամ մըն ալ
կը տեսնէք , թէ որքան զգոյշ պէտք է ըլ-
լանք մէկը դատապարտելու համար : Անառ-
բակոյս , նորէն մեծ ուրախութիւն մըն է
տեսնելը որ մարդս սխալ մը գործած է , կամ
թէ ի՞նչ կ'ըսէք այս մասին :

Տիկին Ա. Ես ալ կ'ըսեմ որ դուք մեծ
ողայ մըն էք եւ այդպէս ալ պիտի մնաք ,
Մանտէրս :

Բաւարոր Մ. Ե՛ս :

Տիկին Ա. (Երկու յետեւը անոր հետեւեալ
լեռնայի լեռնակ) Եւ յետոյ սա ալ կ'ըսեմ , որ ես
կը փափաքէի երկու ձեռքերովս վզիդ փաթ-
թուիլ :

Բաւարոր Մ. (Ինչպէս ահապարանով եր
լեռնակ) Ո՛չ ո՛չ . Աստուած շնորհք տայ մեզի...
այս տեսակ ցանկութիւններ

Տիկին Ա. (Խորաւով) Նոյն իսկ ինձմէ՞ս ալ
կը վախնաք :

Բաւարոր Մ. (Անհաշտ առջեւ շարժ) Դուք
երբեմն այնպիսի չափազանցուած կերպ մը ու-
նիք ըսելիքնիդ արտայայտելու աղէկ
միտքս ինկաւ . նախ սա վաւերաթղթերը հա-
ւաքեմ եւ գրպանս դնեմ (այնպէս կ'ընէ) : Ասի-
կա լմնցա՛ւ : Եւ առ այժմ մնաք բարով : Ու-
շադրութիւն ըրէք երբ Օսկալտ վերադառնա-
նա վերջը նորէն կուգամ Ձեզի : (Գլխաւոր
կ'առնէ եւ շախախէնէպէ՛ շախախէն կը յեկնէ) :

(Շարունակելի)

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Էնկի՛րի՛րի , Թղթակից . — Հաճեցէք
փութացնել հաշիւներուն կարգադրութիւնը
որոնք այնպէս կը մնան տակաւին :

ԱՏԱՐԱՅԱՐ , Թղթակից . — Ստացանք
Ձեր զրկածը . կը խնդրուի որ փութացնէք
ամբողջական հաշիւն կարգադրութիւնը :

ԻԶՄԻՐ , Թղթակից . — Կը հաստատենք
մեր վերջին նամակը : Անհամբեր Ձեր պա-
տասխանին կը սպասենք :

ԱՐԱՐԵՐԴ , Թղթակից . — Ստացած ենք
ձեր նամակը . Ձեր յանձնարարութիւնը
տով կը կատարենք , Ձեր նորագոյն
կը սպասենք :

ՍԱՄՍՈՆ , Թղթակից . — Հաճեցէք
հապտում տալ մեր փափաքին . անհաշտ
լուրերուն կը սպասենք :

ՄԱՐԶՈՒՆ , Թղթակից . — Ստացանք
Ձեր զրկածը . հաճեցէք մնացորդը
հաշիւնը :

ՏՐԱՊԻԶՈՆ , Թղթակից . — Ստացանք
թղթատարով Ձեր լուրերուն կը սպասենք :

ԱՏԱՆԱ , Թղթակից . — Կանոնաւոր կեր-
պով թերթերը կը զրկուին : Կը հաստատենք
մեր վերջին նամակը , 1 Սեպտ. թուակիր ,
անհամբեր Ձեր լուրերուն կը սպասենք :

ՆԻԿՈՒՄԻԴԻՍ , Թղթակից . — Ձեր բոլոր
պահանջներուն գոհացում տրուած են ար-
դէն շատոնց . Ձեր ուղած բոլոր թերթերը
զրկած ենք : Ձեր լուրերուն կ'սպասենք :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԺԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. Ա. ՏԹԻՆՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսըլար Եօզուլու , Կ. Պոլիս :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

887 թուականին գրուած մագաղաբեայ գրչագիր հայերէն Աւետարանի լուսասիւս հրատարակութեան մասին :

Լազարեան շեմարանի Արեւելեան Լեզուաց հիմնական մատենադարանում պահւում է ի միջի այլոց մի գրչագիր, որ հնագոյնն է մինչեւ այսօր ծանօթ բոլոր հայ գրչագիրներին : Նորա մասին շատ անգամ յիշուած է եղել հայ գրչագիրների այլ եւ այլ նկարագրութիւնների մէջ եւ հայ հնագրութեան վերաբերեալ մասնագիտական երկերի մէջ . նորան նուիրուած են եղել եւ մասնաւոր աշխատութիւններ : Այդ յիշեալ մատենադարանի Ն⁰ 1111 տպագիր Յուցակի մագաղաթեայ Աւետարանն է, որ գրուած է խոշոր Մեսրոպեան կամ երկաթագիր տառերով ՅԼԶ. թուականութեան Հայոց եւ յամի Տեառն 887 :

Իրեւ հնագոյն հայ գրչագիր՝ այս Աւետարանը մեծ կարեւորութիւն ունի հայ հնագրութեան համար եւ մանաւանդ Նոր Կտակարանի թնագրի ֆենակաւ ուսումնասիրութեան համար՝ ի նկատի առնելով նորա բազմաթիւ տարբեր ընթերցուածները . ոչ պակաս հետաքրքրական է եւ գրչագրի ուղղագրութիւնը :

Լազարեան շեմարանի Մասնագիտական Դասարանների (Լիկէօն) Խորհուրդը՝ վաղուց ըմբռնելով հայ գրչութեան այս հազարամեայ յիշատակարանի կարեւորութիւնը գիտութեան համար, միտք յղացաւ սորանից մի երեք տարի առաջ ամբողջութեամբ տպագրելու յիշեալ գրչագրի բնագիրը հանդերձ կարեւոր լուսարանութիւններով : Բայց յետոյ՝ խորհելով, որ այս անգուղական գրչագրի հրատարակութեան մէջ անհրաժեշտ է պահպանել ամենայն ճշգրտութեամբ մինչեւ վերջին նշանախօսքը բոլոր նորա առանձնայատկութիւնները եւ դորանով միջոց տալ մասնագէտներին, որոնք անդադար զիմում են շեմարանի վարչութեանը բուն գրչագրի համար, սորա հաւատարմագոյն օրինակները ունենալ իրենց ձեռքի տակ, Խորհուրդը վճռեց լոյս ընծայել ամբողջ գրչագիրը շուտասիւս նմանահանութեամբ :

Լուսատիւ հրատարակութիւնը բաղկացած է 229 թղթից կամ 458 երեսից՝ մեծ քառաւոր զիւրքով, ընտիր թղթի վերայ : Գրքին կցած է եւ ընդարձակ Առաջաբան : Տպագրուած են շատ սահմանափակ թուով օրինակներ (միայն 300) : Գրքի գինն է Ճանապարհածախսով — 20 ռուբլի (23 ռ. վերադիր վճարով) Ռուսաստանի համար եւ 60 ֆրանք Արտասահմանի համար : Դիմելու է. Լազարեան շեմարան, Մոսկուա :

ՏԱՐԵՐԻ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Հեղինակ ԱԼԻՔՍԱՆ ՊԵՋՃԵԱՆ

Նորագոյն միակ դասագիրքը, զոր գիտնական հեղինակը երկար տարիներու փորձառութենէ վերջ պատրաստած է ինքնով. 280 էջերէ բաղկացած, 115 պատկերներով, մաքուր թուղթի վրայ, կազմուած սիրուն հատոր մըն է, մասնաւորաբար ազգ. նախնական եւ երկրորդական վարժարաններու մէջ գործածուելու համար : Գինը միայն 8 զրշ : Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով : Կեդրոնատեղին է Մատթէոսեան վաճառատունը : Կայ նոյն հեղինակութեան հայատառ տաճկերէնն ալ, հայերէն տպագրութեան յար եւ նման :

Սոյն հեղինակութիւնը յանձնարարելի է նաեւ իբր ընթերցանութեան գիրք բոլոր բնութեան գաղտնիքներով հետաքրքրուողներու համար :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ծաղիկ իբր տասը փարանոց առաւօտեան օրաթերթ սկսած է հրատարակուիլ սեպտեմբեր 6էն սկսելով: Խմբագրութիւնը կազմուած է հետեւեալ անձերէ, աշխատակիցներով հանդերձ. — Ղ. Բոլատ, Դ. Խաչկոնց, Ազան Վ. Արտոյտ, Տիրայր Վ., Արաքս, Հերմինէ, Սոխակ, Հր. Աճառեան, Կայծողիկ, Ասիլ, Մ. Մալաքեան, Գր. Շահինեան, Թուխ-Կուպօ, Մ. Թապաղեան, Ս. Թապաղեան, Յովհ. Գաղանձեան, Միհր. Յովհաննէսեան, Ռոզմէրի, Գեղամ, Տիրքան Քիրիշեան, Համբարձում Թաղերեան, Սարգիս Պողիկեան եւ Մ. Թուրեան: Ունի նաեւ հոյլ մը աշխատակիցներու արամադրելի ուժ:

Բաց ի օրաթերթի սովորական նիւթերէն, «Ծաղիկ» կը մշակէ Տնտեսական, Գրական, Հասարակական, Գիտական, Ազգագրական, Բանասիրական, Հնախօսական, Լեզուադիտական ու Արհեստագիտական նիւթեր:

Բաժանորդագրութեան եւ ուրիշ տեղեկութեանց համար զիմեւ Կալաթա, Բէրլէմպէ-Բազար, Համսի-Բաշա խան, Էսկի Պանդա փողոց, «Ծաղիկ» խմբագրատունը:

THE INTERNATIONAL BROKER

(Ծանուցում)

Այն բոլոր վաճառականները, նաւորդները, խուզարկունները, հնարիչները, առեւտրական մարդիկը, կալուածատէրները եւ մասնաւոր անձեր որոնք գնելու կամ ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան, հողեր, հանքային հորեր, գործարաններ, առեւտրական տուններ, քանդակներ կամ զանազան ապրանքներու ծրարներ, մեքենաներ, կայքէն նաեւ այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշի մը հետ ընկեր կամ ընկեր մը կը փնտռեն, հետազոտութիւններու, առեւտրական գործառնութիւններու, սենտիքաներ եւ ընկերութիւններ կազմելու եւ կամ թէ առեւտրական որ եւ է գործ մը աշխարհիս որ եւ է մէկ մասին մէջ կատարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2 չելին) եւ ազգարարութիւններ տան վերը յիշուած նպատակներէն միոյն համար, կամ պատասխանեն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին The International Broker ի մէջ, հասցէն 11, Southampton Row, London W. C



Աշխարհ օգերուն հետ, որոնք հաճելի գովութիւն մը բերած են արդէն, թէյի գործածութիւնը նորէն ամէն տեղ սկսած է: Զով օրերու մէջ թէյին գործածութիւնը հաճելի տաքութիւն մը կը պատճառէ մարդու, եւ ասիկա զգացած են ամէն անոնք, որոնք թէյ գործածելու օգտակար սովորութիւնը ունին արդէն: Թէյին հաճելի տաքութիւն մը տուող յատկութիւնը մանաւանդ աւելի կը զգայ մարդ երբ ազնիւ տեսակի թէյ կը գործածէ: Կ. ԵՍՎՐՈՒՆԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ թէյի վաճառատունը իր ազնիւ տեսակներովը եւ խառնուրդներովը, մանաւանդ զինի աժանութեամբը կը մրցի Տաճկաստանի մէջ գտնուած բոլոր միւս վաճառատուններուն հետ:

Ուշադրութիւն վաճառատան մարքային:

Վաճառատունը կը գտնուի Կ. Պոլիս Ճեշալ պէշ խանին սակ, թիւ 10: